# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## *Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2014 թվականի կատարված աշխատանքների մասին*

2014 թվականին վաղ գարնանային գյուղատնտեսական աշխատանքները սկսվեցին բնակլիմայական անբարենպաստ պայմաններում:

Ցրտահարության և կարկտահարութան հետևանքով խիստ վնասվեցին պտղատու և խաղողի այգիները, իսկ մի շարք համայնքներում նաև գյուղատնտեսական մշակաբույսերը:

Պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 470տ ազոտական պարարտանյութ, 136736լ դիզելային վառելանյութ, 28500 կգ գարնանացան գարու, 66000 կգ աշնանացան ցորենի և 468 կգ առվույտի սերմացուներ:

Ցրտահարության և կարկտահարության հետևանքով պատճառված վնասները մեղմելու նպատակով մարզի առավել տուժած համայնքներին ՀՀ կառավարության N 398-Ն որոշմամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից գարնանը անհատույց տրամադրված 1 կգ լոլիկի, 40 կգ վարունգի, 24 կգ սեխի և 25 կգ ձմերուկի սերմացուները համայնքների ղեկավարների միջոցով հատկացվել են հողօգտագործողներին՝ համաձայն համապատասխան ավագանիների կողմից հաստատված բաշխացուցակների, իսկ ՀՀ կառավարության N 941-Ն որոշմամբ աշնանը, մասնավորապես սահմանային և բարձր լեռնային համայնքների շահառուներին անհատույց հատկացվել է 37000կգ գարնանացան գարու, 630կգ առվույտի և 30կգ եգիպտացորենի սերմացուներ՝ 2015թ. գարնանը համապատասխան ցանք կատարելու նպատակով:

ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ մարտի 30-ին տեղացած առատ ձյան և ցրտահարության հետևանքով մարզի 18 համայնքների հողի հարկ և հողի վարձակալության վճար վճարող, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկված համայնքներում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացվեց 4,452 միլ. դրամ որպես հողի հարկ և 8,0 միլ. դրամ որպես ոռոգման ջրի 50% զիջվող վարձավճար:

Հակառակ ստեղծված բնակլիմայական անբարենպաստ պայմաններին, վերոհիշյալ պետական աջակցությունների և մարզի հողօգտագործողների լարված ու քրտնաջան աշխատանքի արդյունքում, ինչպես նաև համայնքների ղեկավարների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, մարզպետարանի ու ջրօգտագործող

ընկերությունների համակարգված գործողությունների շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները, բացառությամբ խաղողի և պտղի /պայմանավորված հայտնի պատճառներով/, բոլոր բնագավառներում գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները: 2014թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 4691հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 186 հա-ով:

Ներկայացվում է 2013-14թթ. գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները աղյուսակի տեսքով՝

| N | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Տարածությունը / հա / | | | Համախառն բերքը / տ / | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2013թ | 2014թ | Տարբ. | 2013թ | 2014թ | տարբ | % |
| 1 | հացահատիկ և հատիկաընեղեն | 2495 | 2607 | 112 | 6214 | 6802 | 588 | 109.5 |
| 2 | Բանջարեղեն | 396 | 407 | 11 | 6684 | 7658 | 974 | 114.6 |
| 3 | Բոստան | 14 | 36 | 22 | 306 | 712 | 406 | 232.7 |
| 4 | Կարտոֆիլ | 178 | 179 | 1 | 3238 | 3370 | 132 | 104.1 |
| 5 | Պտուղ, հատապտուղ | 1951 | 1966 | 15 | 5730 | 5443 | -287 | 95.0 |
| 6 | Խաղող | 911 | 916 | 5 | 5324 | 5111 | -213 | 96.0 |
| 7 | Խոտ | | | | 28808 | 29283 | 475 | 101.6 |
| 8 | Ընդ.ցանքատարածություն | 4505 | 4691 | 186 | | | | 104.1 |
| 9 | Կաթ տ. | | | | 24890 | 25462 | 572 | 102.3 |
| 10 | Միս տ. | | | | 5550 | 5594 | 44 | 100.8 |
| 11 | Ձու մլն. հատ | | | | 17.4 | 30.5 | 13.1 | 175.0 |
| | Համախառն արտադրանքը մլրդ. դրամ | | | | **20,0** | 20,8 | 0,8 | 104,0 |

Արտադրված 5111 տ խաղողից վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 3093 տ. բարձրորակ խաղող, որի դիմաց վճարման ենթակա գումարը կազմել է 695միլ.դրամ: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ մթերված խաղողի դիմաց խաղողագործներին վճարվել է 665մլն. դրամ:

2014 թվականին <<Հայկական միրգ>> ծրագրով մարզի Արին և Ազատեկ համայնքներում հիմնվել է 27.6 հա պտղատու այգի (բալենու, ընկուզենու):2015 թվականին նախատեսվում է վերոհիշյալ համայնքներում հիմնել ևս 10.7 հա պտղատու այգի:

Բույսերի պաշտպանության ծրագրով << գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 27.6կգ ցինկի ֆոսֆիդ թունանյութով մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել Գոմք և Խաչիկ համայնքներում՝ 230հա

հողատարածքի վրա: ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնագետների հետ համատեղ մշտական ուսումնասիրություն է իրականացվում բույսերի կարանտին և ոչ կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ուղղությամբ:

Վարչության կողմից համակարգվել է անասնաբուժական ծառայությունների կողմից պետական պատվերով նախատեսված բուժպրոֆիլակտիկ միջոցառումների իրականացումը մարզի համայնքներում: Ախտորոշիչ միջոցառումների իրականացման արդյունքում հայտնաբերվել է բրուցելյոզով հիվանդ 151 գլուխ խոշոր և 771 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Օրենքով սահմանված կարգով իրականացվում է վտանգված անասնագլխաքանակի շարունակական առողջացումը:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 22436 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 9639 գլուխ, մանր եղջերավոր՝ 23035 գլուխ, խոզեր՝ 1713 գլուխ, թռչուններ՝ 60027 թև և մեղվաընտանիք՝ 23349 փեթակ, իսկ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակի հաշվառման տվյալները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության կողմից դեռևս չեն ամփոփվել:

Անասնաբուծության զարգացման նպատակով մարզի Գնդեվազ համայնքում կառուցվում է խոշոր եղջրավոր անասունների տոհմաբուծական ֆերմա և կաթի մթերման ու վերամշակման մեկ ձեռնարկություն, նախատեսված 350 գլուխ կաթնատու կովի և 150 գլուխ երինջի համար: Վերագործարկվել է Գնդեվազի թռչնաբուծական ֆաբրիկան՝ 44000 թև հավ, 24000 թև վառեկ, օրական 35000 ձու արտադրողականությամբ, իսկ Զառիթափ համայնքում շահագործման է հանձնվել ժամանակակից սպանդանոց,որն իր ամբողջ կարողությամբ կաշխատի 2015 թվականին:

Վարչության կողմից համակարգվել է <<Վայք>> և <<Եղեգնաձոր>> ՋՕԸ -ի կողմից ոռոգման ջրի անխափան մատակարարման, առաջացած խնդիրների լուծման ու վերացման, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերանորոգման, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման պլան ժամանակացույցի խախտումները նվազագույնի հասցնելու աշխատանքները: :

Ոռոգման սեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 8 789 հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 96 679 հազ. դրամ, գանձվել է 99 267,4 հազ. դրամ, որը կազմում է հասույթի 102,7 %- ը:

Ափապաշտպան կառույցներ ստեղծելու նպատակով ուսումնասիրվել է Եղեգիս և Արփա գետերի առավել սելավավտանգ հատվածները և այն ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, հակահեղեղային միջոցառումների իրականացման ծրագրերում ընդգրկելու համար, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2014թ .հակահեղեղային միջոցառումներ չեն իրականացվել:

Գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից է նաև արտադրության կազմակերպման մեքենայացումը,մարզի համայնքներում առկա մեքենաները, տրակտորները և գյուղատնտեսական գործիքները հիմնականում ֆիզիկապես ու բարոյապես մաշված են, վերջին երեք տարիներին գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող ընկերությունների կողմից ձեռք են բերվել ընդամենը 22 միավոր տարբեր հզորության տրակտորներ իրենց գյուղ. գործիքներով, իսկ եղած քանակությունը բավարար չէ ագրոտեխնիկական կանոնների պահանջներին համապատասխան գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար: Գյուղացիական տնտեսություններին պատկանող հողակտորները փոքր են և գտնվում են տարբեր հանդամասերում, իսկ եղած բազմամյա տնկարկների մեծ մասը հին են ու մշակության համար ոչ մեքենահարմար: Ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել կազմավորելու գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Գրեթե ամեն տարի մարզի գյուղատնտեսությանը մեծ վնաս են պատճառում բնական աղետները՝ /ցրտահարություն, կարկուտ, հեղեղ և այլն/: Վերջին տարիներին մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են վեց հակակարկտային կայաններ, որոնց միջոցով հնարավոր չէ կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնել մարզի ողջ տարածքում:

Հաշվետու ժամանակաշրջանում ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 990 մլն դրամ գյուղատնտեսական վարկ, որից սուբսիդավորված՝ 490 մլն դրամ:

**Բնապահպանություն**

Հաշվետու ժամանակաշջանում ուսումնասիրվել են մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և կազմվել են համապատասխան ծրագրեր ու առաջարկություններ խնդիրների լուծման և շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու ուղղությամբ: Հիմնովին կարգի են բերվել Վայք և Եղեգնաձոր քաղաքների աղբավայրերը:

Եղեգնաձոր քաղաքում համայնքների զարգացման երրորդ փուլի ծրագրի շրջանակներում 2013-2014թթ. ձեռք է բերվել 120 աղբաման, իսկ համաֆինանսավորման հաշվին պատրաստվել և տեղադրվել է 90 աղբարկղ: Կանոնակարգված աղբաթափություն իրականացնելու նպատակով Եղեգնաձոր քաղաքի աղբավայրի մուտքը ցանկապատվել և տեղադրվել է դարպաս, ցանկապատման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

Ընդունվել է աշխատակից, որի միջոցով իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, ինչպես նաև աղբանոցի մաքրված տարածքներում մարզպետարանի աշխատակիցների կողմից տնկված տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները:

Ջերմուկ և Վայք քաղաքներում սեփական միջոցների հաշվին տեղադրվել է. Ջերմուկում 74 աղբաման և 126 աղբարկղ, իսկ Վայքում 40 աղբարկղ: Այս պահին մարզի գյուղական համայնքներում չհսկվող և չարտոնագրված աղբակույտեր գործնականում գոյություն չունեն:

Մարզպետարանի կողմից աշխատանքներ են տարվում կենտրոնացված և միջհամայնքային աղբավայրերի տեղադրման ուղղությամբ:

Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական և սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 15065 հա հողատարածքներից անտառածածկ է 7656 հա: Ստեղծված հանձնաժողովի միջոցով ուսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը: ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության և մարզպետարանի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման՝ 4 , անտառահատման՝ 1, ձկնագողության՝ 26 և որսագողության 1 դեպքեր, բնությանը հասցված վնասը վերականգնված է:

Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք շահագործման, ինչպես նաև հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել: Մարզի տարածքում գործում են.

- հանքային ջրերի 3 հանքավայր
- հանքային ջրերի շշալցման 4 գործարան
- քարի արդյունահանման 7 հանքավայր
- քարի վերամշակման 9 արտադրամաս:

**Գյուղատնտեսության և բնապահպանության**
**վարչության պետ Մ. Ներսիսյան**